

ՎԵՐԺԻՆԷՆԷ ՍՎԱԶԼԵԱՆ. Պոլսահայոց բանահիւսութիւնը. ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2000, 592 էջ:

Բանասիրական գիտութիւնների դոկտոր Վերժինե Սվազլյանի «Պոլսահայոց բանահիւսութիւնը» նշանակալից աշխատութիւնը տրամաբանական շարունակութիւնն է իր «Մուսա լեռ» (1984), «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդութիւնը» (1994), «Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայութիւններ» (1995), «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» (1997–1999 Հայերեն, ռուսերեն, անգլերեն), ինչպես նաև վերջերս լույս տեսած «Հայոց ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններ» (2000) արժեքավոր հրատարակութիւններում:

Վ. Սվազլյան ծնած է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը, բնիկ պոլսահայ ընտանիքի մեջ: 1947-ին Հայրենազարժած է Հայաստան, ուսանած Հայագիտութիւն ճյուղով, ինքնահաստատված է բանագիտութիւն մեջ որպէս անհատականութիւն և մինչև օրս ՀՀ ԳԱԱ Հնագիտութիւն և ազգագրութիւն ինստիտուտի առաջատար գիտական աշխատող է:

Սույն հսկայածավալ աշխատութիւնը, որ ան կատարած է պոլսահայոց բանավոր ավանդութիւնը գրառելով և կորուստեն փրկելով, ալ ավելի կարժեքավորվի այն Հանգամանքով, որ ավադ սերունդը կգտնվի անհետացումի եզրին:

Ի տարբերութիւն նախորդների, Հեղինակը այս աշխատութիւնը աշխատասիրած է արևմտահայերենով և մեսրոպյան ուղղագրութիւնը, որը բացառիկ արժեք ունի Հատկապէս Սփյուռքի արդեն իսկ Հանգչող դաղթօջախներու Հայութիւն Համար: Հատորը լույս է ընծայված Կ. Պոլսո Հայոց Մեսրոպ Բ պատրիարք Մութաֆյանի բարեշնորհ Հովանավորութիւնը:

Վ. Սվազլյանը սույն բանահիւսական և հուշապատումային վկայութիւնները դրի է առել 1996 և 1997 թթ. Ստամբուլի, Ս. Փրկիչ ազգային Հիվանդանոցի ծերանոցի և Իշխանաց կղզիներուն մեջ իրենց Հանգիստը անցկացնող պոլսահայերեն, ինչպէս

նաև պատեհ առիթներով Երևանի, Աթենքի և Կալիֆոռնիայի բնիկ պոլսահայերեն:

Ժողովրդական հարցման ենթարկված 120 բանասացները կներկայացնեն 1886–1989 թթ. ընկած հարյուրամյա ժամանակաշրջանը ծնվածները: Հայաստանյան բանասացներու պատմածներուն մեջ զգալի է արևելահայերենի ազդեցութիւնը. մինչդեռ Ստամբուլի մեջ գրի առնված նյութերը կզգացնեն այլ լեզուներու (թուրքերեն, ֆրանսերեն, հունարեն, անգլերեն) շփման ազդեցութիւնը:

Հաշվի առնելով ժողովրդական նյութերու այլազանութիւնը Հեղինակը կզգմել է նյութերու և բանասացներու գիտական մանրամասն ծանոթագրութիւն-աղյուսակներ, ուր կմատնանշվին յուրաքանչյուր նյութի ստեղծման և գրառման վայրերը, բանասացի ծննդան թիվը, անուն-ազգանունը: Այս տվյալները թույլ կտան որոշել բանասացներու սեռատարիքային առանձնահատկութիւնները: Ըստ այդ տվյալներու Հեղինակը հանգել է կսորք մը կարևոր եզրակացութիւններու, որ բանահիւսական տարրեր ժանրեր կենսունակ են տարբեր կերպ. օրինակ՝ ծավալուն Հեքիաթներու և պատմական զրույցներու, խրատներու և հանելուկներու գերակշռութիւնը կպատկանի ավադ և միջին սերնդի այր մարդոց, իսկ ավանդութիւնները, կրոնաբարոյախոսական, կենցաղային, գավելտական, կենդանական զրույցները, օրորոցային, մանկական, պատանեկան, ծիսական (հարսանեկան, տոնական) երգերը, ինչպէս նաև առած-ասացվածքները, օրհնանք-անեծքները, մազթանք-աղոթքները և դարձվածները մեծ մասամբ կանանց: Այնինչ բնիկ գավառացի ծնողներեն ծնած, բայց Ստամբուլի մեջ ուսում առած, գրեթե թուրքախոս դարձած նոր սերնդի բանավոր մշակութիւնը գրեթե ոչինչ կպահպանե ավանդականներ, որոնք իրենց տեղը գիջած են Հայկական (զպրոցական) կամ Համաշխարհային այլ արժեքներուն:

Աշխատութիւնը կսկսի առաջարանով, որուն կհետևի պոլսահայ Համայնքի մասին

պատմաբանագիտական ակնարկ մը սկսած Հայոց պատրիարքութեան Հիմնադրումներն (1461) մինչև մեր օրերը, այնուհետև կտրվի բուն ժողովածուի բանահյուսական նյութերու սյուժետային և թեմատիկ բնութագիրը, որը բաղկացած է 1517 միավորի: Ընդ որում 258 միավոր արձակ բանահյուսություն, 131 չափածո բանահյուսություն, 1108 ասուլիսային բանահյուսություն, 3 ազգագրական ծես և 17 երգերու եղանակներ:

Արձակ նյութերու բաժինին մեջ առկա են գեղաբանական առասպելներ և հեքիաթներ, որոնք գրի են առնված երևանաբնակ պոլսահայերի, քանի որ Ստամբուլի մեջ չէին պահպանված ավանդական գրույցներ, որոնք կմեկնաբանեն Պոլսո և անոր շրջակայքի տեղանունները. զավեշտական գրույցներ, որոնց մեջ որոշակի թիվ կկազմեն Մոլլա Նասրեդդինին նվիրված գրույցները. առակներ և կենդանական գրույցներ. այս կամ այն գավառի բնիկ Հայերուն և կամ այս կամ այն ազգին բնութագրող կենցաղային գրույցներ և պատմական բնույթի հուշապատումներ, որոնք կվերարտագրեն պատմական նշանակալից գեմքեր, գեպքեր և իրադարձություններ:

Չափածո բանահյուսության բաժնի մեջ տեղ են գտած օրորոցայիններ, մանկական, պատանեկան երգեր, սիրերգեր, պանդխտություն, ծիսական (Հարսանեկան, տոնական), զավեշտական և բնութային գեղեցկությունները գովերգող երգեր:

Լեզվաբանական տարրեր բովանդակող Հաջորդ բաժինը առանձնապես արժեքավոր է, քանի որ այնտեղ կհիշատակվին արևմտահայերենի ինքնատիպ յուրահատկությունները, որոնք գրեթե չեն արտացոլված այլ բառարաններում մեջ: Այդ բաժնի մեջ ամփոփված են ասուլիսներ և դարձվածներ (ինչպես օրինակ՝ «Տունը՝ սատանա, գուրը՝ քահանա» կամ «Մի՞թե՛ հեռու, կիներ՝ մոտիկ»), նաև անեծքներ, օրհնանքներ և դարձվածներ: Անշուշտ, ժողովածուի մեջ տեղադրված այս նյութերը սպառիչ չեն [անկասկած ուսուցողական մոտեցում ցուցաբերելու դեպքում, ցանկալի էր «Աչքը ծակ(ագահ)»-ի կողքին ունենալ նաև «Աչքը բաց(արթնամիտ)»-ը, սակայն այդ չի եղել հեղինակի առաջադրանքը]:

Հաջորդ բաժինը նվիրված է շարք մը փոքրածավալ ասուլիսներու՝ Հանելուկներ

[«Կակուղ կաշի, ոչ կը Հալի, ոչ կը մաշի (լեզու)», շուտասելուկներ [նման ֆրանսերենի «Որսորդը որ գիտե որսալ առանց իր շանը...»], Հանգավոր ասացվածքներ [«Տաշեմ, տաշես, Արտաշես»], գուշակություններ կամ սնահավատություններ [որոնք կտեղեկացնեն, թե կոշիկները հակառակ դիրքով դնելը կամ հայելիի կոտրվելը կնշանակե տան մեջ մահվան դեպք, իսկ ափի մեջ քոր գալը՝ մոտալուտ դուժարի ստացում] և վերջապես ծեսերի [մկրտություն, պսակագրություն, հուղարկավորություն] մանրամասն նկարագրություններ՝ Հայերեն և թուրքալեզու երգերով ճոխացված:

Այս տարասեռությունը նկատելի է հատկապես լեզվաբանական հարթության վրա, ինչպես կընդգծե հեղինակը, Հայաստանի մեջ ապրող պոլսահայ բանասացներու լեզուն, իբրև, Կ. Պոլսո բարբառը չէ, մի բան որ կընա ազդել որոշ ասուլիսներու ձևի վրա: Հարց կառաջանա, թե արդյոք որոշ ասուլիսներ չեն կրեր այլ բարբառներու ազդեցություններ [օրինակ՝ «-իլ» խոնարհումները «-ելով» վերջացող բայերի դեպքում], որը կբացատրվի, թե ներկայիս Ստամբուլ ապրող բանասացները համեմատաբար վերջերս գաղթած են դավառներեն: Սակայն հեղինակը գործել է գիտական բացարձակ պարկեշտությամբ և խստապահանջությամբ՝ համարակալելով և ցանկերի մեջ ինքեքսավորելով յուրաքանչյուր քաղված նյութ, որպեսզի միշտ հնարավոր ըլլա որոշել բանասացի և անոր Հաղորդած նյութի ուրվանկարը:

Հետևաբար ժողովածուն կատարելապես օգտագործելի է ոչ միայն որպես արևմտահայերենի ուսումնական ձեռնարկ, այլև որպես հետազոտ ուսումնասիրողներու համար լեզվաբանական և կամ բանագիտական դիախորոնիկ (տարժամանակյա) տեսանկյուններն դիտված ուսումնասիրության աշխատանք:

Ուստի փրկված նշխարները չափազանց արժեքավոր ներդրում են: Հարկ է ողջունել պրոֆ. Վերթինե Սվազլյանի գիտական և մարդկային արժանիքները, որ ձեռնահասուլիսային և հաստատակամությունային, նյութական և այլ աներևակայելի պայմաններուն մեջ, կրցած է սույն շքեղ հատորը հրատարակել:

ԱՆԱՀԻՏ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ (INALCO, Փարիզ)